Կարգապահական գործ թիվ ԿԳ-25019

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԴԱՎԻԹ ԳՐԻՇԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետև նաև՝ Պալատ)** հանձնաժողովը **(այսուհետև նաև Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Կարեն Խալաթյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

Գրավոր ընթացակարգով քննության առնելով փաստաբան **Դավիթ Գրիշայի Հարությունյանին** (արտոնագիր թիվ 2100) **(այսուհետև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիայի (**այսուհետև՝ Ակադեմիա**) ղեկավարի 04.12.2024թ. տեղեկանքի (մուտք՝ 09.12.2024թ.) համաձայն՝ փաստաբան **Դավիթ Գրիշայի Հարությունյանը 2024թ. առաջին կիսամյակի (հունվար-հունիս)** ամիսներին չի մասնակցել պարտադիր վերապատրաստման որևէ դասընթացի:

2. **Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Պալատի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի 09.01.2025թ. թիվ 22-Ա/ԿԳ-25019 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Փաստաբանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև նաև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի և Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետև նաև՝ Կանոնագիրք)** 2.8.2 ենթակետի խախտման հատկանիշներով:

Թիվ ԿԳ-25019-2-Ա
12.05.2025թ.

16.01.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Գարիկ Հախնազարյանին **(այսուհետև՝ նաև Աշխատակից)**:

3. <u>Փաստաբանի համառոտ բացատրությունները.</u>

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 14.02.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Պալատում մուտքագրվել է Փաստաբանի 13.03.2025թ. դիմումը, որով Փաստաբանը հայտնել է, որ բնակվում է արտերկրում, իսկ վերապատրաստումներին չէր կարող միանալ տեխնիկական խնդիրների պատճառով, ինչի մասին տեղեկացրել է Պալատին վերապատրաստման դասընթացի մասին էլ.փոստին ի պատասխան: Նշվածով պայմանավորված Փաստաբանը խնդրել է դրանց չմասնակցելը համարել հարգելի:

4. <u>Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 14.03.2025թ. կազմել է եզրակացություն:

Սույն կարգապահական գործը 14.03.2025թ. հանձնվել է Հանձնաժողովին:

Հանձնաժողովը 18.03.2025թ. կարգապահական գործն ընդունել է վարույթ, նշանակել է զեկուցող, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման հրապարակման օր, այն է՝ 12.05.2025թ.:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) 2024թ. առաջին կիսամյակի (հունվար-հունիս (ներառյալ)) ընթացքում Պալատի, Ակադեմիայի և Պալատի կողմից սահմանված կարգով հավատարմագրված կազմակերպությունների կողմից կազմակերպվել է 130 (մեկ հարյուր երեսուն) վերապատրաստման դասընթաց: *Նշված փաստը հաստատվում է Պալատի աշխատակազմի ղեկավարի և վերապատրաստման հարցերով համակարգողի 25.03.2025թ. տեղեկանքով:*

2) Փաստաբանը 2024թ. առաջին կիսամյակի (հունվար-հունիս) ամիսներին չի մասնակցել պարտադիր վերապատրաստման որևէ դասընթացի: *Սույն փաստը հաստատվում է ՀՀ փաստաբանական ակադեմիայի ղեկավարի 04.12.2024թ. տեղեկանքով:*

3) Պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/5-Լ որոշման ուժի մեջ մտնելուց հետո Փաստաբանի նկատմամբ նվազագույն ժամաքանակով վերապատրաստման դասընթաց չանցնելու հիմքով վարույթը հարուցվել է երկրորդ անգամ: Պալատի նախագահի առաջին տեղակալի 17.04.2024 թվականի որոշմամբ հարուցված կարգապահական վարույթի արդյունքներով Հանձնաժողովը 05.09.2024 թվականի որոշմամբ Փաստաբանի նկատմամբ կիրառել է կարգապահական տույժ՝ «նկատողություն», **որը համարվում է մարված**: *Սույն փաստը հաստատվում է Պալատի աշխատակազմի ղեկավարի 25.03.2025թ. տեղեկանքով:*

6. <u>Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից հաստատված փաստերը, կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի խնդիրներն են, ի թիվս այլնի, կազմակերպել փաստաբանի ունկնդիրների մասնագիտական ուսուցումը և փաստաբանների վերապատրաստում:*

Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի խորհուրդը՝ սահմանում է փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի ու այլ վճարների, փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների չափերը, ինչպես նաև դրանք վճարելու կարգերը:*

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և ժամաքանակով մասնակցել սույն օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին, բացառությամբ սույն օրենքով կամ փաստաբանների պալատի կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:*

Օրենքի 45.12 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է անցնել փաստաբանների պալատի խորհրդի սահմանած կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներ, որոնք չեն կարող երկու տարվա ընթացքում քառասունութ ժամից պակաս լինել:*

Կանոնագրքի 2.8.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է Պալատի խորհրդի կողմից սահմանված կարգով և ժամաքանակով մասնակցել Օրենքով նախատեսված վերապատրաստման դասընթացներին:*

Պալատի խորհրդի 13.01.2023թ. «Փաստաբանների վերապատրաստման, դրա համար անհրաժեշտ վճարների չափը սահմանելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 2/5-Լ որոշման հավելվածի (այսուհետև՝ Կարգ) 9-րդ կետի համաձայն՝ *յուրաքանչյուր կիսամյակի (վեց ամսվա) համար փաստաբանը պետք է անցնի* ***նվազագույնը*** *12 (տասներկու) ակադեմիական ժամ (այսուհետ՝ ժամ, 1 (մեկ) ակադեմիական ժամը հավասար է 40 (քառասուն) րոպեի) ժամաքանակով (այսուհետ՝ Նվազագույն ժամաքանակով) վերապատրաստման դասընթացներ:*

Կարգի 8-րդ կետի համաձայն՝ *վերապատրաստման դասընթացները կազմակերպվում են ըստ կիսամյակների, բացառությամբ Կարգով նախատեսված դեպքերի: Կիսամյակի հաշվարկը՝ ա) սկսվում է հունվար ամսից և ավարտվում հունիսին (ներառյալ), կամ բ) սկսվում է հուլիս ամսից և ավարտվում դեկտեմբերին (ներառյալ):*

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ *Նվազագույն ժամաքանակով վերապատրաստման դասընթաց չանցնելու հիմքով փաստաբանի նկատմամբ առաջին անգամ հարուցված կարգապահական վարույթը կարճվում է, եթե նա գրավոր դիմում (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով) է ներկայացրել << փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովին՝ պարտավորվելով հաշվետու կիսամյակում չանցած Նվազագույն ժամաքանակով վերապատրաստման դասընթացների ժամերն անցնել հաջորդ կիսամյակում և եթե նա չի օգտվել Կարգի 46-րդ կետով նախատեսված հնարավորությունից:*

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ *Կարգի 46-րդ կամ 47-րդ կետերում նշված փաստաբանի*

դիմումը՝ հաջորդ կիսամյակում վերապատրաստման դասընթացներն անցնելու վերաբերյալ՝ առաջացնում է նշված ժամաքանակով վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականություն: Կարգի 46-րդ կամ 47-րդ կետում նշված հիմքով հաջորդ կիսամյակում վերապատրաստման դասընթացին մասնակցելու դեպքում, փաստաբանը պետք է նախապես գրավոր տեղեկացնի ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ նշելով դասընթացի թեման, դասընթացի ամսաթիվը և մասնակցության հիմքը:

Փաստաբանի վարքի նկատմամբ հարաբերականորեն խիստ սահմանափակումները պայմանավորված են փաստաբանի մասնագիտության առանձնահատուկ բնույթով և հանրային բարձր կարգավիճակով, որը պայմանավորված է փաստաբանության՝ որպես իրավապաշտպան գործունեության մեծ կարևորությամբ:

Այս համատեքստում, առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանների շարունակական վերապատրաստումը, որը հանդիսանում է Օրենքով ամրագրված Պալատի կարևոր խնդիրների մեկը: Ըստ այդմ, նշված խնդրի իրականացման ապահովման համար Օրենքը սահմանել է ոչ միայն վերապատրաստման դասընթացներին մասնակցելու փաստաբանների պարտավորությունը, այլ նաև լիազորել է Պալատի խորհրդին, ի թիվս այլնի, նաև սահմանել փաստաբանների վերապատրաստման կարգն ու ժամաքանակը:

Նշվածի հաշվառմամբ, Կարգն իր հերթին կարգավորելով նաև փաստաբանների վերապատրաստման դասընթացներ անցնելու, այդ թվում՝ ընթացակարգի, ժամկետների, ժամերի հաշվարկի առանձնահատկությունները, սահմանել է, որ վերապատրաստման դասընթացները կազմակերպվում են ըստ կիսամյակների և ներառում են նվազագույնը 12 ակադեմիական ժամ (1 ակադեմիական ժամը հավասար է 40 րոպեի), որը փաստաբանը պետք է անցնի տվյալ կիսամյակի ընթացքում:

Ընդ որում, չնայած նրան, որ սահմանված Կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներին չմասնակցելն ինքնին հանդիսանում է կարգապահական խախտում և փաստաբանի համար առաջացնում է բացասական հետևանք կարգապահական տույժի տեսքով, այնուամենայնիվ, Կարգը նախատեսել է որոշակի պայմաններ, որոնց միաժամանակյա առկայության դեպքում Պալատի Հանձնաժողովն իրավասու է կարճել վերապատրաստում չանցնելու հիմքով փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը:

Մասնավորապես, Հանձնաժողովը նշված վարույթը կարող է կարճել, եթե՝

- փաստաբանի նկատմամբ նվազագույն ժամաքանակով վերապատրաստման դասընթաց չանցնելու հիմքով վարույթը հարուցվել է առաջին անգամ,
- փաստաբանը գրավոր դիմում է ներկայացրել Հանձնաժողովին՝ պարտավորվելով հաշվետու կիսամյակում չանցած նվազագույն ժամաքանակով վերապատրաստման դասընթացների ժամերն անցնել հաջորդ կիսամյակում,
- փաստաբանը չի օգտվել Կարգի 46-րդ կետով նախատեսված հնարավորությունից:

Հարկ է ընդգծել, որ Կարգի վկայակոչված 47-րդ կետի կիրառման արդյունքներով փաստաբանի համար առաջացնում է նշված ժամաքանակով վերապատրաստման դասընթացներին հաջորդ կիսամյակում մասնակցելու պարտականություն, որը ենթակա է կատարման փաստաբանի ընթացիկ պարտավորության հետ զուգահեռ:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովն հարկ է համարում նշել, որ Օրենքով սահմանված վերապատրաստմանը վերաբերող դրույթների կիրարկումից և Պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/5-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստման դրա համար անհրաժեշտ վճարների չափը սահմանելու և վճարելու կարգի» ուժի մեջ մտնելուց հետո դրանցով

ամրագրված նորմերի գործողությունը տարածվում է դրանց ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, որպիսի պայմաններում Փաստաբանի նկատմամբ վերապատրաստում չանցնելու հիմքով **առաջին անգամ** կարգապահական վարույթ հարուցվել էր **Պալատի նախագահի առաջին տեղակալի 17.04.2024 թվականի որոշմամբ**, որի արդյունքներով Հանձնաժողովը 05.09.2024 թվականի որոշմամբ Փաստաբանի նկատմամբ արդեն իսկ կիրառել էր կարգապահական տույժ՝ «նկատողություն», որը համարվում է մարված: **Ըստ այդմ, գործող կարգավորումների ու առկա փաստերի հաշվառմամբ, Փաստաբանի նկատմամբ նվազագույն ժամաքանակով վերապատրաստման դասընթաց չանցնելու հիմքով կարգապահական վարույթ հարուցվում է արդեն երկրորդ անգամ:**

Հանձնաժողովն արձանագրում է, որ 2024թ. առաջին կիսամյակի (հունվար-հունիս) ամիսներին Պալատը կազմակերպել է 130 (մեկ հարյուր երեսուն) վերապատրաստման դասընթաց: Ընդ որում, թեմաները նախապես հաստատված և տեղադրված են եղել Պալատի կայքում, ինչպես նաև Պալատը մշտապես էլեկտրոնային փոստի միջոցով փաստաբաններին տեղեկացնում է վերապատրաստման դասընթացների ժամանակացույցի և առարկաների ցանկի վերաբերյալ, որպեսզի փաստաբանները կարողանան ընտրել իրենց հարմար առարկաները: Այս համատեքստում, Հանձնաժողովն արձանագրում է, որ իրազեկված լինելով Օրենքով ամրագրված վերապատրաստում անցնելու իր պարտականության մասին, Փաստաբանը փաստացի անտեսել է այն և չի մասնակցել 2024թ. առաջին կիսամյակի (հունվար-հունիս) ամիսներին պարտադիր վերապատրաստման որևէ դասընթացի:

Այս համատեքստում, Հանձնաժողովը, անդրադառնալով Փաստաբանի պատճառաբանություններին առ այն, որ նա, գտնվելով արտերկրում, չի կարողացել մասնակցել վերապատրաստման դասընթացների հեռավար ձևով, քանի որ առկա են եղել տեխնիկական խնդիրներ՝ իր էլեկտրոնային հասցեին մուտքի հասանելիության, ինչպես նաև «Google meet» ծրագրին միանալու հնարավորության հետ կապված, ինչի մասին նա տեղեկացրել է Պալատին, արձանագրում է, որ դրանք չեն կարող հիմք հանդիսանալ սույն կարգապահական վարույթը կարճելու համար, առնվազն վերը վկայակոչված կարգավորումների համատեքստում:

Բացի այդ, Կարգի 10-րդ գլխի շրջանակներում հստակ կարգավորված են հեռավար ձևով վերապատրաստման իրականացման առանձնահատկությունները, մասնավորապես՝ **Կարգի 55-րդ կետի համաձայն՝** *Հեռավար վերապատրաստման դասընթացին կարող են միանալ սահմանափակ թվով փաստաբաններ, որոնք սույն կարգի համաձայն նախապես գրանցվել են դասընթացին մասնակցելու համար և ստացել են մասնակցության թույլտվություն: Դասընթացին հեռավար ձևով մասնակցելու (գրանցվելու) համար փաստաբանը պարտավոր է ոչ ուշ, քան դասընթացը սկսելուց երկու օր առաջ էլեկտրոնային նամակ ուղարկել համապատասխան հայտարարության մեջ նշված էլեկտրոնային հասցեով: Հետադարձ դրական պատասխան ստանալուց հետո, փաստաբանը համարվում է գրանցված դասընթացին:*

Կարգի 56-րդ կետի համաձայն՝ *Հեռավար կարգով վերապատրաստում անցնող փաստաբանը պետք է ունենա տեխնիկական բավարար միջոցներ, որոնց մասին ՀՀ փաստաբանների պալատի վերապատրաստման հարցերով համակարգողը էլեկտրոնային նամակով իրազեկում է հեռավար դասընթացին թույլատրված փաստաբանին:*

Այս համատեքստում, հեռավար ձևով կազմակերպվող դասընթացին մասնակցության համար Փաստաբանը նախ պետք է ապահովված լիներ անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, իսկ այնուհետև ձեռնարկեր գրանցման ուղղված գործողություններ, ինչից հետո մասնակցեր

դասընթացին, ինչից հետևում է, որ տեխնիկական միջոցներով ապահովված լինելու պարտականությունն առաջին հերթին դրված է հենց Փաստաբանի վրա, ով պարտավոր էր ունենալ հասանելիություն իր էլեկտրոնային փոստին:

Միաժամանակ, Փաստաբանին վերագրվող վարքագիծը վերաբերում է 2024թ. առաջին կիսամյակի (հունվար-հունիս) ամիսներին, իսկ այդ ողջ ընթացքում վերապատրաստման դասընթացների նվազագույն ժամաքանակը չլրացնելու հանգամանքը հիմնավորելու համար Փաստաբանն ըստ էության չի ներկայացրել որևէ ապացույց կամ հիմնավորում, իսկ ներկայացված «Google meet» ծրագրի օգտագործմանը վերաբերող երկու լուսանկարներից ինքնին պարզ չէ, թե երբ են դրանք կատարվել, արդյոք դրանցում առկա էլեկտրոնային հղումը վերաբերում է որևէ դասընթացի:

Ավելին, առնվազն 2024թ. առաջին կիսամյակի (հունվար-հունիս) ամիսների ընթացքում, երբ կազմակերպվում էին համապատասխան դասընթացները, Փաստաբանն ընդամենը մեկ անգամ իր էլեկտրոնային փոստի միջոցով 13.05.2024 դիմել է Պալատին՝ հայտնելով հեռավար եղանակով դասընթացին միանալու իր մոտ առաջացած խնդրի մասին, այն էլ այն դեպքում, երբ իր նկատմամբ առկա էր հարուցված կարգապահական վարույթ վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով: Հատկանշական է, որ այդ դեպքում ևս Փաստաբանը հղում էր կատարել նրան, որ առկա են տեխնիկական խնդիրներ, սակայն չի հայտնել դրանց առկայության վերաբերյալ առնվազն այն դեպքերում, երբ ողջամտորեն փորձ էր արել միանալ յուրաքանչյուր դասընթացին հեռավար եղանակով:

Այս պարագայում, Հանձնաժողովն ընդգծում է, որ Փաստաբանի կողմից չի հիմնավորվել և չի ապացուցվել իրենից անկախ պատճառներով վերապատրաստման դասընթացներին մասնակցելու անհնարինության առկայության փաստը:

Հանձնաժողովը նաև արձանագրում է, որ Փաստաբանը օբյեկտիվորեն ունեցել է հնարավորություն հաշվետու ժամանակահատվածում անցնելու տվյալ կիսամյակի համար պարտադիր 12 (տասներկու) ակադեմիական ժամ ժամաքանակով վերապատրաստման դասընթացները, սակայն չի կատարել օրենքով նախատեսված պարտականությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, գալիս է այն եզրահանգման, որ Փաստաբանի վարքագծում **առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի** և **Կանոնագրքի 2.8.2 ենթակետի խախտման հատկանիշները**:

7. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի հիմնական խնդիրներից է, ի թիվս այլնի՝ փաստաբանների շարունակական վերապատրաստման, ինչպես նաև նրանց իրավաչափ և փաստաբանական էթիկայի նորմերին համապատասխանող վարքագծի ապահովումը, որոնք իրենց հերթին հանդիսանում են նաև փաստաբանների պարտականությունները:

Ըստ այդմ, Պալատը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցները փաստաբանների կողմից փաստաբանների պարտադիր վերապատրաստման պարտականության ապահովման իրականացման համար, որպիսի պայմաններում էլ դրա չկատարումը՝ այսինքն համապատասխան կիսամյակի ընթացքում նվազագույն ժամաքանակով վերապատրաստման դասընթացների չանցնելը, դիտարկվում է որպես կարգապահական խախտում:

Այդ խնդրի իրացման հիմնական իրավական միջոցներից մեկը Պալատի կարգապահական գործառույթն է, որը դրսևորվում է Օրենքով և Կարգապահական հանձնաժողովի գործունեության կարգով սահմանված ընթացակարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելով: Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Պալատն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են նաև փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ, որոնց հաշվառմամբ Պալատին իրավունք է տրվում փաստաբանի նկատմամբ կիրառել որոշակի տույժի տեսակ:

Օրենքով Պալատին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Պալատը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Այսպես, Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով Պալատը պարտավորվում է փաստաբանի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելիս ղեկավարվել համաչափության սկզբունքով, ինչպես նաև հաշվի առնել կարգապահական խախտման հետևանքները, իրավախախտի անձը, մեղքի աստիճանը և վերաբերելի այլ կարևոր հանգամանքներ:

Պալատի հանձնաժողովը նաև հարկ է համարում արձանագրել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն,

իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժին ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների գիտելիքների ու հմտությունների շարունակական կատարելագործումը պարտադիր վերապատրաստումների միջոցով, իսկ փաստաբանների կողմից այդ պարտականության խախտման դեպքում՝ ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշների կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ գործի նյութերով հաստատված է համարվում, որ 2024թ. առաջին կիսամյակի (հունվար-հունիս) ընթացքում Պալատի կողմից կազմակերպվել է 130 (մեկ հարյուր երեսուն) վերապատրաստման դասընթաց, իսկ Փաստաբանն իր հերթին չի մասնակցել պարտադիր վերապատրաստման որևէ դասընթացի, այն պարագայում երբ լրացման ենթակա նվազագույն ժամաքանակը կազմում է՝ 12 ակադեմիական ժամ, այսինքն 4 դասընթաց, յուրաքանչյուրը 3 ակադեմիական ժամով (4*3=12):

Ընդ որում, Փաստաբանի նկատմամբ վերապատրաստում չանցնելու հիմքով առաջին անգամ կարգապահական վարույթ հարուցվել էր Պալատի նախագահի առաջին տեղակալի 17.04.2023 թվականի որոշմամբ, որի արդյունքներով Հանձնաժողովը 05.09.2024 թվականի որոշմամբ Փաստաբանի նկատմամբ արդեն իսկ կիրառել էր կարգապահական տույժ՝ «նկատողություն», որը համարվում է մարված: **Հետևաբար Հանձնաժողովը դրա իրավական հետևանքները չի տարածում սույն դեպքի նկատմամբ:** Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը արձանագրում է, որ.

- 2023թ. երկրորդ կիսամյակի (հուլիս-դեկտեմբեր (ներառյալ)) ընթացքում Պալատի, Ակադեմիայի և Պալատի կողմից սահմանված կարգով հավատարմագրված կազմակերպությունների կողմից **կազմակերպվել է 102 (մեկ հարյուր երկու) վերապատրաստման դասընթաց:**
- Փաստաբանը 2023թ. երկրորդ կիսամյակի (հուլիս-դեկտեմբեր) ամիսներին չի մասնակցել պարտադիր վերապատրաստման որևէ դասընթացի:
- Փաստաբանը նախկինում չի պարտավորվել 2023 թվականի 2-րդ կիսամյակի ամիսներին չանցած նվազագույն ժամաքանակով վերապատրաստման դասընթացների ժամերն անցնել 2024 թվականի առաջին կիսամյակում:
- 2024թ. առաջին կիսամյակի (հունվար-հունիս (ներառյալ)) ընթացքում Պալատի, Ակադեմիայի և Պալատի կողմից սահմանված կարգով հավատարմագրված կազմակերպությունների կողմից կազմակերպվել է 130 (մեկ հարյուր երեսուն) վերապատրաստման դասընթաց:
- Փաստաբանը 2024թ. առաջին կիսամյակի (հունվար-հունիս) ամիսներին չի մասնակցել պարտադիր վերապատրաստման որևէ դասընթացի:

- Փաստաբանը այժմ էլ չի պարտավորվել 2024 թվականի առաջին կիսամյակի ամիսներին չանցած նվազագույն ժամաքանակով վերապատրաստման դասընթացների ժամերն անցնել հաջորդ կիսամյակում:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովը հաշվի է առնում այն, որ Փաստաբանը ոչ միայն չի մասնակցել քննարվող կիսամյանի համար կազմակերպված թվով 130 (մեկ հարյուր երեսուն) վերապատրաստումներին և ոչ մեկին, այլև չի մասնակցել նախորդ կիսամյակի համար անցկացված վերապատրաստումներին, ուստի անհերքելի փաստ է, որ վերջինս մեկ ամբողջական տարվա ընթացքում չի մասնակցել վերապատրաստումներից ոչ մի դասընթացի: Բացի այդ, Փաստաբանը, վերապատրաստումներին չմասնակցելու փաստով հարուցված կարգապահական գործով, չի ներկայացրել որևէ բացատրություն որով կհավաստվեր նրա կողմից այլ հավատարմագրված կառույցներում վերապատրաստումներ անցած լինելու հանգամանքը: Պալատի կազմակերպած վերապատրաստումներին չմասնակցելը, ինչպես նաև այլ հավատարմագրված հաստատություններում վերապատրաստում չանցնելը ակներև ցույց է տալիս Փաստաբանի վերաբերմունքը Օրենսդրական իմպերատիվ կանոնակարգմանը: Վերջինս անտեսել է Փաստաբանի համար նախատեսված վերապատրաստում անցնելու օրենսդրությամբ սահմանված պարտավորությունը, ինչն, ի դեպ, վերջինիս կողմից երբևէ չի հերքվել:

Հանձնաժողովը հարկ է համարում նաև նշել, որ Փաստաբանը անգամ չի լրացրել «Փաստաբանի վարքագծի կանոնները (դեոնթոլոգիա)» առարկան, որը յուրաքանչյուր Փաստաբան պարտավոր է տարին առնվազն չորս ժամ վերապատրաստվել՝ առանց հայեցողական լիազորության:

Նման պայմաններում, Հանձնաժողովը տեղին է համարում մեջբերել՝ ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ. ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ-1263 որոշումը, որում ՀՀ սահմանադրական դատարանը նշել է. *«Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. «Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները* ***<u>սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը</u>****»:*

Փաստաբանների տեսական գիտելիքների ամրապնդման անհրաժեշտությունն ուղղակիորեն ամրագրված է նաև Կարգի *2-րդ կետում, որի համաձայն՝ Վերապատրաստման նպատակը փաստաբանների գիտելիքի, հմտությունների և մասնագիտական պատրաստվածության բարձրացումն է:*

Փաստաբանական հմտությունների, գիտելիքի և մասնագիտական պատրաստվածության բարձրացումն փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից է, ինչի բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի

հասարակական նշանակությունը: Օրենքը փաստաբանին պարտավորեցնում է մշտապես բարձրացնել իր մասնագիտական բարձր որակավորումը, մասնագիտական հմտություններ և փորձը, վերապատրաստման միջոցով:

Վերը նշված պարտադիր վերապատրաստման դասընթացներին մասնակցելը ուղղակիորեն կապված է նաև իր վստահորդների հանդեպ ստանձնած պարտականությունների բարեխիղճ կատարման հետ, որը կրկին փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից է:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանն առնվազն պարտավոր էր գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը ու թույլ չտալ այդպիսի վարքագիծ՝ մասնակցելով վերապատրաստման դասընթացներին:

Նշված հանգամանքները վկայում են այն մասին, որ առկա է համաչափություն Հանձնաժողովի կողմից հետապնդվող իրավաչափ նպատակի և այդ ուղղությամբ ընտրված միջոցի միջև, որպիսի պայմաններում, Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործով, Փաստաբանի մեղքի բնույթն ու աստիճանը և անձը բնութագրող հանգամանքները հիմք են նրա նկատմամբ կիրառելու՝ որպես հիմնական կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև՝ որպես լրացուցիչ կարգապահական տույժ՝ «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել» տույժի տեսակները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. ***Փաստաբան Դավիթ Գրիշայի Հարությունյանի (արտոնագիր թիվ 2100) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ 12 ակադեմիական ժամ ժամաքանակով, որից 4 ակադեմիական ժամը «Դեոնթոլոգիա» թեմայով՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 45.12-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև Կանոնագրքի 2.8.2-րդ ենթակետի պահանջների խախտման համար:***
2. ***Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել Փաստաբանին:***

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25019-2-Ա
12 մայիսի 2025թ.
ք.Երևան